

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Պատրագրադրացիք գինում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

“ՄՇԱԿ” ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՓԱՂԱՔԱ- ԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1880 ԹՎ

ՀՐԵՏԵՐԵԿՎՈՒՄ Է ԸՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ՏՈՆ և տոնների հե-
տեւաւ օրերից:

Լրագրի դիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌՈՒԳԻՐՆԵՐ «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլի է, կես տարվան 6 ռուբլի: Գրքեր կարելի է ՄԻԼՅՆ
ԽՄԵՐԵՐԵՐԵՐԸ մէջ:

ԸՄԵՆՁԻՆ ՀԵՐԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատոր:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով ՊԻՓ-
ЛИСЬ Редакция «Мшак».

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսանողական ծառ:—Ներքին տեսութիւն:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն:
Թիւրքիա:—Վրացի հեռագիրներ:—Հայտարարու-
թիւններ:—Բանասիրական օրերտոտոն, Բայց
և կամար Տէր-Գալստիան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՒԲՍՈՆ, ԲՈՒՅ ԵՒ ԿԵՄԱՐ ՏԵՐ-ԳԱՍ-
ԹԵԱՆՑ

Մեր ընթերցողները, երբի, յիշում են, որ ան-
ցեղաւ տարուայ Վրացիի № 189 մենք քննելով պ.
կամար Տէր-Գալստիանցի «Русское Слово» դասա-
գիրքը, ցոյց տուցինք, թէ որքան կարող է ծա-
ռայել այդ դասագիրքը այն նպատակին, որի հա-
մար աշխատասիրած է: Ամեն մէկը կարողով մեր
յօդուածը, մեր կարծիքով, կարող էր ասել ինքն
կովկասեցու «Рус. Слово» գրքին վերաբերեալ
խօսքերը ճիշդ են, մինչև անգամ չարժէր այդ դա-
սագիրքը քննել, որովհետև ամեն մի փոքր իշտա-
հասկացող մարդ վերցնելով ձեռքը պ. Տէր-Գալ-
ստիանցի դասագիրքը առանց դժուարութեան և
առանց լրագրիչների օգնութեան կարող է գնահա-
տել նորան: Ուղիղ ասած, մենք ևս նոյն կարծիքի
էինք, երբ առաջին անգամ սեր ձեռքն ընկաւ
«Рус. Слово»: Եթէ ամեն մի յիմար յօդուած, ամեն
մի յիմար դասագիրք ենթարկուելու լինէր քննու-
թեան, այն ժամանակ միայն այդ նպատակով հրա-
տարակուած ամենօրեայ թերթը հազիւ թէ կարո-
ղանար արդարացի իրա նպատակը, վասն զի մե-
ղանում անձոնի, յիմար յօդուածներին և գրքերին
չափ ու սահման չը կայ: Եւ, ասում եմ, առե-
ւորը կը համարէի «Рус. Слово» դասագիրքը քննու-
թեան վրա ժամանակ կորցնել, եթէ մի
պայման չը լինէր, այն է, որ այդ դասագիրքը յա-
մարեալ պ. թիւական տեսչի ընդունված է
Վրաստանի և Նախիճի խոյոց բոլոր ծխական ու-
սումնարաններում: Այն ինչ էր պատճառը, որ մենք
մեր սրբազան պարտք համարեցինք թէ հատար-

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՅ

Յունվարի 12-ին թիֆլիսի
ուսումնարանում և ուսում
չաւարտած այլ և այլ ազ-
գութիւնների պատկանող ուս-
համարարանների հին ուսանող-

րակութեան և թէ այ ժաման պ. թիւական տես-
չի ուղարկութիւնը դարձան պ. Տէր-Գալստիանցի
դասագիրքի վրա: Այդ յօդուածը գրելուց յետոյ
անցնում է մի քանի շաբաթ: Վերջու. Հայաստա-
նի անցեալ տարուայ № 96 կամ 97 ընտանիւ-
կան բաժնում կարդում ենք ՎԵՐ քանի նկատու-
ղութիւններ անաչաւ կրթութիւնին վերաբերող պ.
Գ. Սի յօդուածը: Այդ յօդուածով պ. Գ. Ս. կա-
մենում է իբր թէ ցոյց տալ, որ պ. Տէր-Գալ-
ստիանցի «Рус. Слово» չառ լաւ դասագիրք է, որ
պ. Տէր-Գալստիանցը ճշգրտութեամբ ամբողջ էր
ԲՈՒԲՍՈՆ և ԲՈՒՅ ի մէջ թողնելով
որ գրքի երկրորդ բաժնից բոլոր 29 դասերը միակերպ
չեն, այլ առաջին դասից մինչև 17-ը ուրիշ է, իսկ
17-ից մինչև վերջ ուրիշ, որ պ. Տէր-Գալստիանցը
ընդամենը հազիւ 5 երես է վեր առել Ուլանիու-
«Род. Слово»-ից, իսկ մնացածները Պատկանցի, Դո-
ւլանի և այլն, որ Ուլանիու «Род. Слово» գրքի մէջ
ոչ մի կապ չունեն գրաւոր վարժութիւնները ըն-
թերցանութեան յօդուածների հետ, իսկ պ. Տէր-
Գալստիանցի դասագիրքի մէջ նորա նախընթաց յօ-
դուածների հետ մեծ կապ ունեն, որ «Рус. Слово»
ունի նպատակ հայ մանուկներին որքան կարելի է
չուտով սովորեցնել հնչուածութեամբ իրանց օտար
ուսուցիչները բարբառը և խօսքները այդ լեզուով,
իսկ «Род. Слово» ունի նպատակ ուսումնական-
րին դարձացնել իրանց մայրենի լեզուով, սովորեց-
նել նոյնպէս մտածել, հարստացնելով և մաքրելով
նոյնպէս մայրենի լեզուն, որ գրքի գինը շատ է: Այս
ամենը հաստատուել համար պ. Գ. Սին հարկա-
ւորուցեալ ասել, որ կովկասեցի աչք աւելաւ
է, անա զին է, նա իր գիտութիւնը քա-
ղուած է Դատուելով լամպիւրի միջոց,
կովկասեցի լեզուն կամեցնել է միայն գրքի
ան ունը կուտրել, ծանօթ չը լինելով
նորա հետ (պ. Գ. Ս., դուք չէք կրցրել այս
խօսքերի նշանակութեան զգալու ընդունակութիւ-
նը) և այլն և այլն:

Մենք ի հարկէ երբէք չէինք պատասխանի պ.
Գ. Սին, որի յօդուածը ոչ թէ ճշմարտութիւն
պաշտպանելու ցանկութեան հետեանք է (մենք

ներք, թուով մի քանի հարիւր
մարդ հաւաքեցին տեղիս Հայոց
անուանված կուրբի դահլիճում և
մարդագրութիւն 8 ռուբլի ստորագր-
վելով ճաշ կերան: ճաշի ժամա-
նակ գեղեցիկ ճառեր խօսեցին,
կերակուրներ կերան, զինի եմե-
ցին և վերջը պար եկան: Բայց
մի և նոյն ժամանակ և մի երե-
ւելի բարի գործ էլ կատարեցին
մեր բարձրագոյն ուսումն ստացած-
ները, այն է այսքան մարդիկ, բո-
լորն էլ լաւ ապահոված մարդիկ,
մինքն աստիճանաւոր, միւսը փա-
տարանը, երրորդը բանկիր, չոր-
րորդը բժիշկ, որոնք իրանց փորի
վրա ծախեցին մի երկու երեք
հազար ռուբլ, հաւաքեցին չքաւոր
ուսանողների համար ընդամենը
700 ռուբլ:

Փառք և պատիւ մեր ինտե-
լիգէնցիային:

Մոռացանք ասել թէ ինչ ա-
ռիթմով էր յիշեալ ճաշկերպութիւնը, դա
Մօսկվայի, Ռուսաստանի ամենա-
հին համալսարանի գոյութեան
125 տարեկան տարեդարձն էր....

այդ կը հաստատենք ներքեւ), այլ գուցէ և իր մօ-
տիկ բարեկամը, պ. Տէր-Գալստիանցի, շահերի
պաշտպանին է: Մենք չէինք պատասխանի պ. Գ.
Սին, ասում ենք, եթէ մենք չը զիտնայինք, որ
հայ ընթերցողները չառաքելի կարելի է մոլորեց-
նել մի քանի գիտնականների լոկ անուններ յիշելով,
ինչպէս անում են պ. Գ. Ս. և նորա նմանները:
Ընթերցողներից չառաքելի գուցէ յայտնի է, որ
պատասխան են մի տեսակ մարդիկ, որոնք, իրանք
ոչինչ ուսում առած չը լինելով, ուզում են իրանց
ձեռքները երեւել գիտնականներ: Այդ տեսակ պա-
րանքներ, խօսակցութեան ժամանակ, հազար ու մէկ
գիտնականի անուն են յիշում (որ պատասխանը լը-
սել են), կամենալով իբր թէ իրանց առաջ ընդած
դատողութիւնները հաստատել, մի քանի լատինե-
րէն խօսքեր են մէջ գցում, աշխատում են ցոյց
տալ, որ հակառակ կողմը ոչինչ տեղեակ չէ և
այլն և այլն: Այդ տեսակ պարանքներ կազմում են
մի որոշեալ տիպ:

Մենք կարող ենք ցուել միայն, որ այդ տիպը յա-
տուում է և մի գրականութեան մէջ: Պ. Գ. Ս.
նոյն իսկ ասել է, ինչպէս կը տեսնէ ընթերցողը:
Այժմ մենք շատ ուրախ ենք, որ միջոց ունենք
ժամանակ մեր ընթերցողներին այդ տիպի հետ,
հենց դա համար ենք զիտաւորապէս այս անգամ
վերցնում գրքի ձեռք:

Այդպիսի պարանքներ նախ և առաջ ուղում են
ցոյց տալ իրանց անկողմնապաշտութիւնը որոշեալ
հարցերի վրա վիճելու ժամանակ: Եթէ դուք վի-
ճում էք որ և իցէ պարանքի հետ, ի հարկէ դուք
առելի անկողմնապաշտ կարող էք լինել, եթէ ձեր
հակառակորդի հետ անձնական յարաբերութիւններ
չունէք, որը մնաւանդ չէք կարող ունենալ, ե-
թէ նրա հետ մինչև ծանօթ չէք: Այդ բանը շատ
զեղեցիկ է հասկանում պ. Գ. Ս. և այդ է պատ-
ճառը, որ իր յօդուածի գրեթէ սկզբում ասում է
թէ՝ ոչ «Рус. Слово» դասագիրքի հետ ծանօթ է և ոչ
նոյն իսկ այդ գրքի կրթիկա պ. կովկասեցու հետ:
Ուրեմն գիտացեք, ընթերցողներ, որ ես կովկա-
սեցու հետ չեմ կարող որ և իցէ անձնական յա-
րաբերութիւններ ունենալ, որովհետև ես նրա հետ

կարծում ենք որ ինտելիգեն-
ցիայից կարելի էր սպասել որ նա
այդ տեսակ հանդիսաւոր օրը մի
աւելի նշանաւոր մարդասիրական
գործով տոնէր: Թող դարձեալ
չքաւոր ուսանողների համար լի-
նէր նշանակած հաւաքված գու-
մարը, բայց արդեօք ծիծաղելի չէ,
երբ մարդը տեսնում է որ այդ-
քան գեղեցիկ ճառեր ասող ին-
տելիգէնցիան ծախում է իր փո-
րի վրա մինչև 3000 ռուբլ իսկ
չքաւոր ուսանողների համար այդ
բոլոր ապահոված և մի ժամա-
նակ ուսանող եղած մարդիկ կա-
րողացան հաւաքել միմիայն 700
ռուբլ:

Եւ տեղական ուսաց լրա-
գրութիւնը հիացած է այդ հաջ-
կերպութիւց, մանաւանդ «Օձօր»
լրագիրը:

Գնե՛ք այդ պարանքները այդ
հանդիսաւոր առիթից օգուտ քա-
ղելին մի մեծ գումար հաւաքելու
համար, որ կը դառնար մի մշտա-
կան ընկերութեան մայր-գումար,
որի տոկոսներից մշտապէս մի

մինչև անգամ ծանօթ չեմ, այլ ուզում եմ միայն
պ. Տէր-Գալստիանցի աշխատութիւնը գնահատել...
Յետոյ աշխատում են ցոյց տալ, որ ընդհակառա-
կէն, հակառակորդն է կողմնապաշտ: Եթէ կով-
կասեցին իր հաշիւները չունենար, նա վատ չէր
խօսի այն դրքի վրա, որի հետ նա ծանօթ չէր:
Ապացոյց՝ կովկասեցին ասում է, որ դասագիրքի երկ-
րորդ բաժնի բոլոր 29 դասերը բոլորովին միակերպ
են: Եթէ նա ծանօթանար դասագիրքի հետ, նա կը
տեսնէր, որ մինչև 18-ը դասը ուրիշ է, իսկ 17-ից
մինչև վերջը ուրիշ: Պարտք (կովկասեցին) ասում
է պ. Գ. Ս., երբեք, ասելի հարկաւոր է համարել չը
կարգացած գրքի վրա վատ գրել, քան թէ կարգա-
ւած ճշմարիտ ասել (Մենք ներքեւ կը հաստատենք
որ ոչ թէ մենք ծանօթ չենք դասագիրքի հետ, այլ
դուք ինքներդ, պ. Գ. Ս., ասել թէ ծանօթ էք
այդ դասագիրքի հետ և դիտմամբ մոլորեցնում էք
ընթերցողին):

Ուրեմն առաջին քայլն արած է: Այժմ հարկաւոր
է ցոյց տալ, որ հակառակորդը ոչ թէ ոչինչ քա-
նից տեղեակ չէ, այլ մինչև անգամ լրջակայից
գուրկ է: Այս գէպում ասն ինչպէս է պ. Գ. Ս.
ցոյց տալի կովկասեցու լրջակայից գուրկ լինելը:
«Երբեք լրջակա ունի պ. կովկասեցին», ասում է
պ. Գ. Ս., կովկասեցու խօսքերով «Կատարելի
երկրորդ մասը ամենաշահական է, և այդ պատճա-
ռով ամենապատիւ է», չը զիտենք «ամենաշահական»
է պատճառ, որ ամենապատիւ է, թէ ամենա-
պատիւ է պատճառ, որ ամենաշահական է: Զար-
մանալի սուր միտք էք ունեցել, պ. Գ. Ս., որ
կովկասեցու այդ խօսքերը նշանակում են հետե-
ւեալը. պ. Տէր-Գալստիանցը կարծես դիտմամբ
աշխատել է, որ իր դասագիրքը որքան կարելի է
վատ լինի և այդ է պատճառը, որ, դասագիրքի ա-
մենաշահական մասն—ամենապատիւն է:

Այժմ հասկանում էք, պ. Գ. Ս.:
Պ. Սին, ի հարկէ հարկաւոր էր նոյնպէս աս-
նել թէ կովկասեցին անարիւն է, աչքակապութիւն
է անում և այլն և այլն, այսինքն կովկասեցին ոչ
թէ որ և իցէ գիտութիւնից և լրջակայից գուրկ է,
այլ նրա մէջ բարոյականութեան մինչև անգամ

Այժմ մենք համոզված ենք, որ թէ դուք, պ
Դ. Ս., և թէ դուք, պ. Տէր-Գալթեանց, կը վերջ

նրանք անշուշտ կը գտնէին հայ կալուածա-
տիրոջ անունը, թէպէտ և այդ նրանց, ա-
ռանց այդ էլ շատ լաւ յայտնի է»

Բարձրագոյն Կուռք կայսերական հրովարտա-
կներով հրամայում է, որ հողային բողոքները
նիդամէի դատարաններում վճռվեն, իսկ ինքը
մասնաւոր հրահանգներով պատուիրում է, որ
անպատճառ շէրիի առաջ վճռվին այդ դա-
տերը. թէև և նիդամէի դատարաններն էլ
մի առանձին առաւելութիւն չունեն, որով-
հետև նոյն իսկ կայսերական Ֆրիմաններէի դո-
րութեամբ, այդ դատարաններէի նախագահնե-
րն անպատճառ Իւլէմաներ (1) պէտք է լին-
են:

Մուշի միւլ Գոթին մի թապուր հիման
վրա յաջողացնում է դադանի կերպով իրան
սեփականացնել Մուշի շրջագայութեամբ գտնված
Մարնիդ կոչված ամբողջ գիւղը. ի հարկէ
այս անգամ էլ խեղճ գիւղացոյ բողոքը թէ
տեղական իշխանութիւններէ մօտ, և թէ մեծ
վեղիկ Սյի փաշայի մօտ՝ բողոքովն առանց
որ և է հետեւանքի մնաց:

Մուշի բնակիչ մի թիւրք մանրավաճառ,
զանազան խարդախ ձանադարհներով կա-
րողանում է իրան սեփականացնել Մուշի շրջ-
գայ լեռներում գտնված Պետար անունով
գիւղը, գիւղացիները բողոքում են, բողոքը
երկարանում է վերջապէս շէրիի նոյն գիւղից
վկաներ է պահանջում, բայց այդ սարսափելի
յանդանքն անպատիւ է մնում, որովհետև
ամբողջ գիւղի մէջ ոչ մի վկայ չէ գտնվում. և
այդ այն լոկ պատճառով, որովհետև գիւղի
բոլոր բնակիչները բացառապէս բաղկացած
են հայերից:

Չը նայելով հարկերի բազմաութեան ու
բազմապատկի լինելուն, այնու ամենայնիւ ժո-
ղովուրդը դարձեալ շատ գոհ է, որ հատիկ-
ների տասանորդը հատկով է վճարում, բայց
աւելի անտանելի է խտրի վրա դրված հար-
կը, որը ժողովուրդը ստիպված է փողով
վճարել. այս թշուառութեան պատճառը նը-
րանց է, որ պետութիւնը ստանալով պատ-
րաստի փող միւլ Գոթին Բիւրից, զոհում է
այս վերջիններէն ժողովուրդի շահերը: Կարելի

է երևակայել ժողովուրդի դրութիւնը. միթերը
զիցուք թէ առատ էլ է, արտահանութեան
անկարելիութեան պատճառով միթերը փը-
տում է գետնին, իսկ գիւղացին դրա տասա-
տում է շատ կողմնակի հարկերը փողով
պէտք է վճարէ...

Ահա մի (կենդանիների վրա դրված տա-
սանորդը) էլ միւս հարկերից պակաս չէ ձըն-
շում. քրիստոնեայ ժողովուրդին: Ահա միւլին
(հարկահանը) փոխառակ ժամանակին գալու
և հաշուելու կենդանիները՝ բաւականանում է,
նախորդ տարուայ ցուցակով, և միշտ իր գըլ-
խից էլ մի քանի բաներ աւելացնելով, պա-
հանջում է հարկը. նա ոչինչ ուշադրութիւն
չէ դարձնում գիւղացու արդարացի բացատրու-
թիւններին, որ քրիւրքերը բոլոր տաւարը քը-
շել տարել են, որ ցուռ է ընկել անտառնե-
րն մէջ, և կէսից աւելին կոտորվել են, որ
վերջապէս նա ծախել է և այլ ևս չէ կամե-
նում տաւար պահել. այս բոլորը սուտ է,
անցեալ տարի նա այսքան ունէր, հիմա կե-
րկի մի քանի ոչխարներ կամ կովեր էլ ծըն-
ված կը լինեն, հետեւաբար և թիւն էլ աւե-
լացած կը լինի...

Այս տեղ աւելորդ չենք համարում յիշել
գրքովից և մի փոքրիկ ծանօթութիւն, որի
մէջ ասված է, թէ երբորում վերանորոգու-
թիւնների համար նշանակված մասնաժողովի
թիւրք անդամները, ցոյց տալու համար, որ
իր քրիւրքերն են, որ երկիրը յաջողութեան ու
բարօրութեան մէջ են պահում, և հարստաց-
նում են պետական դանձարանը, իրանց ներկա-
յացրած յայտարարութեան մէջ կենդանիների
հարկերից բաղկացած մի խոշոր թւանշան են
ցոյց տալի, որը ստացված է բացառապէս
քրիւրքերից: Այդ բողոքովն ճշմարիտ է, բայց
եթէ նրանք ներդրութիւն յանձն առնէին և
նայէին, թէ այդքան անասունները ունից
գողացված աւարներ են, կարծեմ, փոխանակ
պարծեալու, նրանք աւելի պէտք է կար-
մէին:

Պատահում են և ուրիշ տեսակ թշուա-
ռութիւններ. օրինակ Տաւրոսի և Գորդիւնի
քրիւրքերը երկար ժամանակ ապստամբվել էին

թիւրքերից և այդ կողմերի հայերին իրանց
հպատակներ էին շինել, և նրանցից ստանում
էին զանազան կանցական հարկեր, ուրիշ
խօսքով ասած, նրանց իրանց ստրուկներ էին
շինել: 1847 թ. ին մասն փաշան կարողացաւ
զերել քրիւրքերի Բէարիսան բէյ, խան Մահ-
մուդ, և Նուրուլահ բէյ առաջնորդներին,
և պարտել նրանց իրանց ընտանիքներն
ուրիշ Նրանով թիւրքերը կարծեցին, որ բոլո-
րովին նուաճեցին քրիւրքերին, բայց այս յաղ-
թութիւնը նորանոր թշուառութիւնների
աղբիւր դարձաւ տեղական հայ ժողովուրդի
համար, որոյհետև փոքր ժամանակից յետոյ,
քիւրք բէյերն ու նրանց շէյխերը, կատա-
ղած իրանց առաջնորդների քարտանքի պատ-
ճառով նորից ապստամբվեցան, և այս աղբու-
րամբութիւնը ծնւելու համար, թիւրքաց
գործերը նորից խաղացին Տաւրոսի և Գորդիւն-
նի վրա: Բայց այս արշաւանքն էլ պակաս
թշուառութիւն չը պատճառեց հայ ժողո-
վուրդին: Ինքժ ժողովուրդը ապշած, մոլորված
չը գիտէ արդօք թափառական քիւրք ցեղերին
իրան տէր ձանաչէ, թէ խուճե—խուճե եկող
թիւրքաց նիդամներին: Նա ճարահատված
հարկ է տալի և թիւրքաց պետութեանը, և
շրջմովի քիւրք բէյերին. այդ դեռ բաւական
չէ, խեղճ ժողովուրդը ենթարկվում է հալա-
ծանքների, ծնւման, զանակոծութեան և ըս-
պանութեան թիւրքերի կողմից, որոնք նրանց
մեղադրում են, որ նրանք հայրենակից և
գործակից են քիւրքերի ապստամբութեանը,
իսկ քիւրքերն էլ նրանց տանջում, չարչարում
ու հարստահարում են, պատճառ բերելով,
որ նրանք թիւրքացներն, հետեւաբար և
մատնիչներ են:

Բացի բազմաութեան և կողմնակի հարկերը,
ահա թէ ինչ տեսակ օրինաւոր հարկեր են
տրված ժողովուրդի վրա:

Ժողովուրդը զիտուորական իշխանութեան
ձեռքով վճարում է 1) ուղղակի կայսերական
դանձարանին, 2) տեղական ժամանակաւոր իշ-
խանութեանը, դարձեալ դանձարանի անունով.
3) նա տալիս է աղաւթի կամ քեւ ֆիւր-
լի կ կոչված հարկը. 4) նրանք պարտաւոր են

վճարել այն թափառական ցեղերի 3 կամ 4
տարուայ հարկը, որոնք երբեք կառավարու-
թեանը հարկ չեն վճարում: և վերջապէս
ժողովուրդի վրա պարտականութիւն է դրած
պէտք եղած ծառայութիւնները անել բանա-
կին և նրան ձրի կերակրել: Ուրեմն միայն
կառավարութեան նշանակած հարկը պէտք
եղածից 5 անգամ աւելի է, էլ մէկ կողմը թո-
ղած, այնքան կողմնակի հարստահարութիւն-
ները, աւարառութիւնները, կողոպտութիւն-
ները, յալիշտակութիւնները և հազար ու
մի անիրաւութիւնները:

Ահա այն արհուալի պատճառները, որոնք
ստիպում են յուսահատված հայերին ցրվել
աշխարհի զանազան կողմերը, և որով նրանք
հեռացնել են անհետանում են մայրենի երկրից:
Սկզբից ի վեր թէ կառավարութիւնը և
թէ տեղական մանր իշխանութիւնները միշտ
աշխատել են աւելադարձութիւն միջոցներով
կատարելապէս ստրկացնել քրիստոնեայ տարրը:
Հետեւաբար և հայերը ամեն ժամանակ են-
թակա են ամեն տեղ անտանելի հայհոյանք-
ներին, ամբաստանութիւնների, տանջանքների,
կողոպտութիւնների, սպանութիւնների, կա-
նանց, աղջկերանց և տղայաց բռնաբարութիւն-
ների, կամ բռնի հաւատափոխութեան, քրա-
պղծութեան են, ևս այս բոլորի վրա աւե-
լացրէ և գողութիւնը, որ մաշում ու սպա-
ռում է նրանց նիւթական կեանքը:

(Կը շարունակվի)

ՄԵԾԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի: Լուր է
տարածվել, որ եկող շաբաթ Կայսրուհու
սպասում են Պետերբուրգում: Մինիստր Լի-
վէնի օգնական է նշանակվել մինիստրների
մասնաժողովի գործերի կառավարչի օգնական
Կուլումզին:

Խոբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նէք Բոլցի ձեռնարկը և կը տեսնէք, որ 19-դ երե-
սով չէ վերջանում առաջին դարը և որ ամեն մի
հետեւող դարձեալ յօդուածները, թէ հարցմանը ներք
և թէ վարժութիւնները որոշեալ սխառմայով է
դասաւորված, Այստեղ յօդուածը առաջ է բերել
յօդուածները և օրինակները ոչ թէ աչքերը խփած,
այլ աչքի առաջ է ունեցնել ուսանելի լեզուի յօդուա-
թիւնները. այդ օրինակներով Բոլցը բացատրում է
քրիստոնեական կանոնները և այն և այն, այն
ինչ «Руч. Слово»-ի երկրորդ մասի գլուխի մէջ
ամենին կապ չը կայ: Ի՞նչի դասը, ինչպէս ասա-
ցի, «Մշակի» անցեալ տարվայ № 189 յօդուածում,
բերորովն նման է միւսին: Պ. Գ. Ս. ուզում է
հաստատանք ընթերցողին, որ կովկասեցին սուտ
է ասում, որ կովկասեցին անմասնօթ է «Руч.
Слово»-ի հետ. ի՞նչ կովկասեցին ծանօթանար
«Руч. Слово»-ի հետ, նա կը տեսնէր, որ առաջին
գլուխի մէջ 17-դ երեւի է. իսկ 17-ից մինչև
վերջը ուրիշ: Այդ պ. Գ. Ս., ձեռն կողմից կատա-
րեալ յանդիմանութիւն է. դուք, ասե՛ք, կարող էիք
ասել, որ պ. Տէր-Գալթեանցի ձեռքից 17-դ երեւի
հետեւել է Բոլցի ասածին և Բոլցի մէջ յօդուած, յուսաւով,
որ ամեն մէկը չէր կարող ձեռք ուղղել (привести),
բայց ինչպէս կարողացաւ դուք հերքել այն, որի
մէջ ամեն մէկը, ձեռք բերելով «Руч. Слово» դա-
սագիրքը, կարող է անմասն համոզվել: Միթէ
դուք ձգելով «фразеология»-ն և պատասխանները,
կարելի է ասել, որ դուք ուրիշ է: Դասը մի և
նոյն է մնում, պ. Գ. Ս., միայն առանց
պոյի: Հասկանում էք թէ ոչ, պ. Գ. Ս.:

Պ. Գ. Ս. ուզում է հաստատել, որ պ. Տէր-
Գալթեանցը շատ է աշխատել իր դասագրքի վրա,
որ Ուլանսկուց նա վերցրել է այսքան շարք (տող),
որ ընդ ամենը հազիւ 5 երես է կազմում. իսկ
մնէր կասե՛ք, որ դասագրքի երկրորդ մասի տասն-
ութ յօդուածից տասնութն Ուլանսկու սեպհա-
կանութիւն է: Մենք ասելով, որ պ. Տէր-Գալ-
թեանցը իր դասագրքի համարեալ բոլոր յօդուած-
ները վերցրել է Ուլանսկուց զիտուորական աչքի
առաջ ունէինք, դասագրքի ամենահաւան մասն,
այն մասն, որ պէտք է արդարացնէր, պ. Տէր-

Գալթեանցի կարծիքով դասագրքի նպատակը:
Մեր հաշուով, եթէ վերցնենք Ուլանսկուց արտա-
տված յօդուածները, ընդամենը կանի ոչ թէ 5
երես, այլ մինչև 20 արտատպած (եթէ հաշուենք
Ուլանսկու յօդուածներն այնքան անգամ, որքան
տպված են Руч. Слово-ի մէջ): Պատահում են Ուլան-
սկու մի քանի յօդուածներ և երրորդ մասում:
«Руч. Слово» դասագրքի երկրորդ և երրորդ մասի
մէջ ոչ մի կապ չը կայ: Երրորդ մասը մի քանի
յօդուածներ է հաւաքածու է, որ ինչպէս ասացի
էս, առանձնապէս հետաքրքիր չեն: Չը գիտեմ, դուք
պ. Գ. Ս.-ի համար շատ հետաքրքիր են. ո՞վ է ի-
մանում Պ. Գ. Ս. ի հարկէ կարող է ասել, որ
այդ յօդուածներն աւելի են աւելում իր յօդուածներ
են Պաուլսկուց, Դոպլինցի և այլն: Պ. Գ. Ս. երկի
և նոյնքան ծանօթ է այդ հեղինակներին հետ, որ-
քան և Բոլցի ասածին ու Բոլցի մէջ յօդու
Պ. Գ. Ս. այն էլ է ասում, որ Ուլանսկու «Руч. Сло-
во» գրքի մէջ ոչ մի կապ չունեն գրաւոր վարժու-
թիւնները ընթերցանութեան յօդուածներին հետ,
իսկ պ. Տէր-Գալթեանցի դասագրքի մէջ նրա
նախընթաց յօդուածներն հետ մեծ կապ ու-
նեն:

Ճշմարիտն ասած, այս խօսքերը միայն ծիծաղ
կարող են յարուցանել: Մեզ մի լրագրական յօդ-
ուածի շրջանը չէ ներում երկարորէն բացատրել
թէ «Руч. Слово» յօդուածներն և գրաւոր վարժու-
թիւնների մէջ ինչ կապ կա, իսկ այստեղ միայն
կը յիշենք ընթերցողին, որ «Руч. Слово» երրորդ
մասում, (որը 51 երես է կազմում) թէ բերանացի
և թէ գրաւոր վարժութիւնները ընդ ամենը 110
տող են, այսինքն միայն 3 երես: Եթէ մենք են-
թադրենք, որ գրաւոր վարժութիւնները լաւ են
յօդուած, ասացէք ինդիւսի, այդպիսի չնչին աշ-
խատանքի համար արժէր այդքան խուճե մատու-
ցանել պ. Տէր-Գալթեանցի առաջ: Երրորդ մասի
միացած 48 երեսը բաւ առ բաւ, ինչպէս և
ինքն պ. Գ. Ս. ևս խոստովանվում է, պ. Տէր-
Գալթեանցը արտատպել է ուրիշների հեղինա-
կութիւններից: Պ. Գ. Ս. այդ բանում ուզում է
արդարացնել պ. Տէր-Գալթեանցին նրանով, որ

Ուլանսկու Руч. Слово-ում նրա աշխատութիւնն
է միայն 125 յօդուած, իսկ միացած 146 ուրիշ
ներկն է: Որքան ինչ յայտնի է, պ. Գ. Ս., Ուլան-
սկին իրա յօդուածներին միայն շատ փոքր մասը
վերցրել է ուրիշներից, իսկ մնացածները կամ ի-
րան է, կամ թէ նա խաղաղման է գերմաներէնից
որոնցից մի քանիսը յարմարեցրել է ռուսաց
կեանքին և ոչ թէ պ. Տէր-Գալթեանցի նման
ուղղակի վերցրել է այս կամ այն ինչ յօդուածը և
արտատպել է: Այս էլ շատ ու շատ դժուար հա-
կանալու է, չէ, պ. Գ. Ս.:

Պ. Գ. Ս. կարծում է, որ պ. Տէր-Գալթեանցի
դասագրքի միջոցով հայ մանուկներին կարելի է
չուտով սովորեցնել հեշտութեամբ իրանց օտար
առուերէն բարբառը և խօսեցնել այդ լեզուով,
իսկ Руч. Слово ունի նպատակ ուսումնասին-
ելու դարձացնել իրանց մայրենի լեզուով, սովորեց-
նել նրանց մտածել, հարստացնել և մաքրել
նրանց մայրենի լեզուն: Այս է իրը թէ պատճա-
ռը, որ Руч. Слово պէտք է փոխարինէր Род.
Слово դասագրքը: Դատ լաւ էք խօսում, պ. Գ.
Ս., բայց հասկացէ՛ք վերջապէս, որ մի կողմից
բաւարար սերտեղով երբեք և ոչ չը լեզու է օ-
վորել և չէ կարող սովորել, միւս կողմից, եթէ
երկուսն փոքր ի շատէ ուղիղ է խօսում հայերէն,
վերցնելով պ. Տէր-Գալթեանցի Руч. Слово դա-
սագիրքը և անդադար և անդադար հանդիպելով
վերջ յիշած նախադասութիւնների նման-
ների (ամեն ասակն սեղանի) և այլն ոչ թէ
առուերէն լեզու կը սովորէ, այլ հայերէն էլ կա-
րող է մտանքից, ցոյցած լեզուն էլ պղնձաղակ,
այն ինչ Род. Слово-ի բազմաթիւ և հետաքրքիր
յօդուածները, չնչին բացառութեամբ, գեղեցիկ
նիւթ կարող է տալ ուսուցչին լեզուն սովորեց-
նելու համար: Ի հարկէ ուսուցիչները իրանք էլ
ծանօթ պէտք է լինեն ռուսաց լեզուի հետ:

Կարող ենք հաստատանք պ. Գ. Ս.-ին, որ այն
տեսակ գրաւոր վարժութիւնները, որ նա գտել է
պ. Տէր-Գալթեանցի դասագրքի երրորդ մասում,
հազար ու մէկ կը գտնէ Ուլանսկու «Род. Слово»-ի
մէջ, թէպէտ ինքն այդ հերքում է:

Գալով, վերջապէս, պ. Տէր-Գալթեանցի դասա-
գրքի դին, պ. Գ. Ս. նկատում է, որ ամօթ
է մեղանում դեռ վարժապետի, հեղինակի աշխա-
տութիւնների վրա խօսքերը և այլն... Եթէ, պ.
Գ. Ս., ամօթ է մեղանում դեռ վարժապետի (ես
վարժապետների վարժատութեան մասին իմ
նախկին յօդուածում մի խօսք անգամ չեմ ասել),
հեղինակի վրա խօսքեր, որքան մեծ ամօթ պէտք
է լինի նրանց համար, որոնք այնպիսի մի ազգի
մէջ, որի ուսումնարանները միայն այս վերջի
ժամանակներում են սկսում փոքր ի շատէ չունչ
ստանալ, այնպիսի մի ազգի մէջ, շուտով ենք,
տարածվելու դասագրքին նշանակել 73% աւելի
քան թէ իրանց է նոտել... Դուք, պ. Գ. Ս., իմ
ուշադրութիւնն էք դարձնում մեր կապալառու-
ների վրա, որոնք ոչնչի համար 100 հազարներ են
գրպանը դնում, դրանով կարծես ուզում էք ար-
դարացնել պ. Տէր-Գալթեանցի վարժանքը: Դուք,
պ. Գ. Ս., ի հարկէ նոյնպէս կարողացնէիք
պ. Տէր-Գալթեանցին, եթէ, աչքի առաջ ունենա-
լով, որ կարող են գտնվել այնպիսի անձինք, որոնք
գողերի նման ձրի այցելում են ներկայացուցիչներ
և նստում են բաղկաթոռների առաջի կամ երկ-
րորդ կարգում, եթէ, ասում ենք մենք, պ. Տէր-
Գալթեանցը նոյնպէս այցելէր ներկայացուցիչներ
և նստէր աթոռների վերջի կարգում:

Եթէ կապալառուները կարող են ոչնչի համար
100 հազարներ գրպանը դնել, ուրեմն և պ. Տէր-
Գալթեանցը կարող է իր դասագրքին 45 Կ. նշա-
նակել: Եթէ մէկը բաղկաթոռների առաջին կամ
երկրորդ կարգում կարող է ձրի նստել, ինչո՞ւ պ.
Տէր-Գալթեանցը աթոռների վերջին կարգում չէ
կարող նոյնպէս ձրի նստել...

Այդքան մենք բաւական ենք համարում հար-
ցը պարզելու համար:

Կովկասեցի

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ն Ն Ե Ր

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„Կ Ա Յ Ծ Ե Ր“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակ թիւն ՐԱՖԳԻ

Վէպը բաղկացած է յինչ երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրւած երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ռ. 50 կ., իսկ միասին 3 ռ.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունուի:

Ստորագրել կարելի է ԳԱՆՈՒՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «ՄԵՂԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Կենտրոնական Գրախնայարարական Դիւղըն փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում աւանդում են հետեւեալ նոր գրքերը:

- | | |
|---|--|
| 1. Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ. և կազմած. Գ. — ռ. 50 կ. | 2. — նոյնը առանց կազմի. — » 30 կ. |
| 3. Փառամաղ մեղու փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ. և կազմած. — » 40 կ. | 4. Ներայր և քոյր մանկանց վէպ. Թարգ. Զ. Մանրեանի պատկերազարդ. — » 30 կ. |
| 5. Հեկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մանրեանի, պատկերազարդ. — » 10 կ. | 6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ. հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. 1 — կ. |
| 7. Փարոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձունեանց — 1 25 կ. | 8. Երկունք խնկերով դարու. գործ Մերեքի. — 1 » — կ. |
| 9. Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրանտ Սատուրի. — » 60 կ. | 10. Մի կաթիլ արտաք, գոր կը հեղու Սիւակ հայ մեղիքին վրայ. — » 35 կ. |
| 11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատաւարութիւն Ս. Արծրունու. — » 50 կ. | 12. Ուսումնարանի առողջարարութեան հարցեր, բժ. Ա. Բարայեանի — 1 » — կ. |
| 13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատիներէնից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի — 1 » — կ. | 14. Կրօնք. հոգեբանական հետազոտութիւն Ս. Մանդեանեանի — 1 » — կ. |
| 15. Հայկական թատրոն. Վուլքի իմ վեճեր, ֆարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի — » 40 կ. | 16. Բերքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի — » 25 կ. |
| 17. Սէնտային երեկոյ գիւղում, փողովի մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Նահրուդեանի — » 25 կ. | 18. Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Չմէկեանի — » 40 կ. |
| 19. Ժամո և Ժանէտ օպերա-փողովի, Թարգ. Գ. Նահրուդեանցի մէկ գործողութեամբ — » 40 կ. | 20. Պէպո. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սուրդուկեանի — » 30 կ. |
| 21. Պառանքներն իրատ. փողովի մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի — » 50 կ. | |
- Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասադրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներով, դասական պոէզիաներ ռուսացիների համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ձևերի վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաբաղադրել իրանց պահանջները պէտքէ ուղարկեն հետեւեալ հասցեով «Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю»

5—6

Մի ԳՐԱՆՈՒՆԻ տալիս է Թէօփիսիական և պրակտիկական ԳԱՍՏԵՐ ԳՐԱՆՈՒՆԵՐՆ ԼԵՂՈՒՅՑ: Հասցեն. Կ ու կ ի ա, Բ է ու ո օ վ ա կ ա յ ա փողոց № 21:

1—4

Մի ՀԱՅ ՕՐԻՈՐԻ, որ այս տարի ԱՒԱՐՏԵԼ է ՄՐՅԱՆԱԿՈՎ իգական ԳԻՄՆԱՌԻՈՆԸ, ցանկանում է ՈՒՍՈՒՑՈՒՆԻՈՒ պաշտօն ստանալ (գլխավորապէս ռուսաց լեզուից և մաթեմատիկայից) մի ՀԱՅ ՕՐԻՈՐԻՆԱԿՈՎ ԴՊՐՈՑՈՒՄ: Պայմանները խնդրում է ուղարկել ԱՅՍ ՀԱՍՑԵՆՈՎ (С. Петербургъ. въ армянскую церковь, священнику Хон-тарджану).

2. ԳՐԻԳՈՐ ԲԵԱՆՏԻ ԿՈՎԱԿԱՍ. ԳՐԱՎԱՃ. ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆՆԵՐԸ

- 1) Մամուլի տակ ընկաւ և 1880 թ. յուն վարին լոյս կը տեսնէր ԳՈՒԿԱՍԵԱՆՏԻ ընդհանուր պատմութեան հին դարը—ա. մի:
- 2) Նույնով մամուլի տակ կընկնէր 2. ԳՐԻԳՈՐ ԲԵԱՆՏԻ աշխատասիրութեամբ և հրատարակութեամբ Մարգարազմութիւն մարդու մարմինը, նորա կեանքը և խնամատարութիւնը—անունով պատկերազարդ գիրք:
- 3) Մամուլի տակից դուրս է եկել և արդէն վաճառվում է «ԾԵՐԵՆՑԻ-ԵՐԿՈՆԵՐ» 9-դ դարու պատմական վէպը, որոյ գինն աւելի տեղ մի բուրլի է: Նոյն տեղը ստացուել է Բառաթի (պ. Տէր-ԱՐՄԱՍԵԱՆԻ) օրացոյցը, երկու պատկերներով զարդարուած. գինն է 15 կ.:

10—10

ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

180 թ. Յունվարի 15-ից Կհրատարակուի Երեւանում շաբաթ մէկ անգամ

«Պ Ս Ա Կ»

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐՋԱԿԱՆ

«Չ Ք Ո Ւ Ք Ք»

Տարեկան գինն է . . . 4 ռուբլի:
Կէս տարեկան . . . 3 ռուբլի:

Ցանկացողները կարող են ստորագրել ուղղակի խմբագրատանը, Գէորգեան և ընկեր. տպարանում: Կամ Արզար Գալաթիեանցի խանութում: Խմբագրատանը բաց է առաւօտեան ժամի 10-ից մինչև ժամի 1-ն ճաշից յետոյ: Օտար քաղաքներից պէտքէ դիմել ուղղակի խմբագրին հետեւեալ հասցեով Въ г. Эривань Редактору газеты „ПСАКЪ“ Васакъ Пападжанову.

Խմբագիր-հրատարակիչ՝ Գր. Վ. Պ ա պ ա ջ ա ն ե ա ն ց .

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՆՆԵԱԿ

Բոլոր եւրոպական լրագիրների համար Մոսկվայում (Центральная контора объявлений для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Вучкова) ԸՆԴՈՒՆՈՒՄ է յայտարարութիւններ ԲՈՂՈՐ ռուս և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ համար խմբագրական ԳՆԵՐՈՎ, նշանաւոր ԶԻՋՈՒՄՆԵՐՈՎ:

Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագիրների ԳԼԽԱՌՈՐ ԲԵՐԵՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: ՍՄԵՆՈՐԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ռուս բոլոր ռուսաց և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ հետ: Ցայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր զաւտական լրագիրների համար: Քարգանտութիւնները ԶՐԻ են լինում: Խմբագրական յայտարարութեան համար ԱՊԱՑՈՒՑԱԿԱՆ № է ուղարկվում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ

ԲԱԺԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունվում է բոլոր լրագիրների համար:

15—15 (4)

ԾԱԽՎՈՒՄ Է

Նոր վրացական ձեռնարկ Самоучитель Учебникъ Грузинскаго языка, сост. Г-мъ Теръ-Габріелянцемъ:

Այդ ձեռնարկը պարունակում է ընդհանուր տեղեկութիւններ ու քերականական կանոններ վրաց լեզուի ամենադիւրին ուսման համար: Բնութեամբ և տարրերի արտասանութիւնը գրված է բանի մի լեզուով ռուսերէն, հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն և պարսկերէն, այնպէս որ այդ միջոցով և օտարազգին ինքն իրան կարող է հեշտութեամբ ուսանել վրաց լեզուն:

Արդէն երկրորդ հրատարակութիւնն է և յուսամբ երրորդ տպագրութեամբ՝ ի լոյս ածել կարճ միջոցից յետ: Գինն է 50 կոպ. ծախվում է պ. Բերնշտամի, Ջաքար Գրիգորեանի, Աւետիք Էնֆիաձեանի մօտ ու Գաբրիէլ Սալամեզեանի խանութում:

Մեր աշխատութիւնը են նոյնպէս. 1) ՉՐանական լեզուի ձեռնարկ, վրաց լեզուի օգնութեամբ. Livre de poche à usage de la jeune arménienne et georgienne; 2) Ինքնուսուցչ ռուս լեզուի վրաց լեզուի օգնութեամբ: Самоучитель Русскаго языка при помощи Грузинскаго. Գարրիէլ Տէր-Գարրիէլեանց: 4—4

«Մշակի» առանձին համարները 5 կոպէկով հատը ծախվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ հետեւեալ տեղերում: «Կարգանախի» մագաղինում (Արծրունու տանը, Գփոցօվի փողոցի վրայ, պ. Նաւազարէզովի մօտ), «Կովկաս» հիւրանոցի տակ (պ. Գէմիլեանցի ծխախոտի խանութում), Ջաքարիա Գրիգորեանի գրախնայարարութեամբ (Միլայեան կարմնի մօտ) և զերձակ Գեղարամեանի մօտ, Բէլախան դպրոցի դիմացը:

ԲԵՐԼԻՆԻ ակադեմիայի Ինստիտուտ Կ. Կ. Կելլինգ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է ամեն տեսակ ՊԼԱՆՆԵՐ և զանազան ԾԻՆՈՒԹԻՆՆԵՐ և յանձն առնում: Հասցեն Վարանդովսկայա Նաբերեժնայա, № 4, ՎԵՐԻՆ ՅԱՐԱՌՄ:

1—5 (3)